Մարօն սկսեց հաւատացնել Մըհէին, թէ ինքը նրա տրեխների կորուստի մէջ յանցաւոր չէ, թէ նա շատ ցաւում է, որ այսպէս էր պատահել: Եւ աւելացրուց, տրեխները բոլորովին հում կաշուց շինած լինելով, եւ որովհետեւ ինքը Մըհեն չէր հագնում նրանց, այլ քարշ տալով ախոռի պատից, պահում էր զատիկ օրոայ համար, տրեխները բոլորովին չորացել եւ կծկոել էին: Երբ Մըհեն դրեց նրանց ջրի մէջ, որ փափկեն, լայնանան, որ կարողանայ հագնել, անիծոած շունը օգուտ քաղելով Մըհէի բացակայութիւնից, գողացաւ տրեխները, եւ ինքը Մարօն այս րոպէիս տեսաւ, որ նա բակի մէկ անկիւնում նստած, դեռ վայելում էր իր անուշ ընթրիքը:

Մարօն այս բոլորը պատմեց մի այնպիսի հեգնական ոճով, որ աւելի շարժեց Մըհէի կատաղութիւնը եւ աւելացրուց.

— Դու խօ գիտես, Մըհէ, որքան ես սիրում եմ քեզ: Ես այնպէս բա՞ն կանեմ քո տրեխների հետ:

— Ես գիտեմ... — քրթմնջաց վիթխարին, եւ իր վայրենի աչքերը ուղղելով սիրուն օրիորդի երեսին, դուրս գնաց սենեակից:

— Իմանում ես, Ֆարհատ, ախար այդ յիմարը սիրահարոած է իմ վրայ, — դարձաւ Մարօն դէպի ինձ:

— Չէ կարելի քեզ տեսնել ու չսիրահարոել:

Նա որպէս թէ չլսեց իմ խօսքը:

— Խե՜ղճ տղայ, նա մինչեւ այսօր պահում է իր ծոցի մէջ իմ հին գուլպաների մի հատը: Քանի՜ տարի է: Շատ անգամ տեսել եմ, ինչպէս հանում է նա ծոցէն, մտիկ է անում, ուրախանում է ու սեղմում է շրթունքի վրայ: Մի անգամ հիւանդ էի ես. ձմեռ էր, խեղճը նստում էր իմ սենեակի դռանը, ամբողջ գիշերը չէր քնում. դռան ճեղքից ականջ էր դնում, թէ ինչպէս շունչ եմ քաշում ես, որպէս հոգոց եմ հանում: Շատ անգամ ես լսում էի, նա լաց էր լինում. մի այնպիսի գազանը լաց էր լինում: Դու գիտե՞ս, Ֆարհատ, իմ սենեակի դուռը բացւում է ուղիղ բակի մէջ. նա նստում էր ձիւնի եւ սառի տակ:

— Երեւի, նա երբեմն քաղցրիկ խօսքեր է ասում քեզ:

— Ոչ, չէ ասում: Նա միայն մտիկ է անում իմ երեսին, խորին կերպով մտիկ է անում, ուրախանում է, երբ ես նրան ուշունց եմ տալիս:

— Երեւի, դա նրան զոարճութիւն է պատճառում:

— Հա՛, մի այդպիսի բան: Լսիր, մի անգամ նա ինձ ասաց՝ «Մարօ, բե՛ր ձեռքս քսեմ քո մազերին»:

— Դու բարկացա՞ր: